Քաղվածք

# Արձանագրություն N 4-փ/17
# ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության
# փորձագիտական հանձնաժողովի նիստի

**06 հունիսի 2017թ** **ք.Երևան**

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամները: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ **Յու. Ջավադյանը:**

Օրակարգում՝

1. Ոռոգման նպատակով Սևանա լճից նախատեսված 170մլն.մ3 ջրթողումներին ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից առաջարկվող լրացուցիչ 100մլն.մ3 ջրթողումների հարցի քննարկումը: /Զեկուցող Յու.Ջավադյան/

Զեկուցման մեջ նշվեց, որ 03.05.2017թ. կայացած նիստին /N2-փ/17 արձանագրության 2-րդ կետ/ հաստատվեց ոռոգման նպատակով Սևանա լճից նախատեսված 170մլն.մ3 ջրթողումների հարցը, իսկ ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից առաջարկվող լրացուցիչ 100մլն.մ3 ջրթողումների հարցը, դիտարկել գարնանային մթնոլորտային տեղումների արդյունքում ջրամբարների լցվածության վերջնական տվյալները ստանալուց հետո:

Ըստ ՀՀ ԱԻՆ "Հիդրոօդերևաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության" կողմից բերված տվյալների Ազատի ջրամբարի լցվածությունը կազմում է 57մլն.մ3, Ապարանինը 44 մլն.մ3, իսկ Ախուրյան ջրամբարի լցվածությունը պակաս է շուրջ 90մլն.մ3-ով իր ընդանուր տարողության նկատմամբ:

**Որոշեցին՝**

Հաշվի առնելով, ստեղծված ոռոգման ջրի դեֆիցիտի խնդիրը, հանձնաժողովը նախատեսում է հանրապետության գյուղատնտեսական 39հազ.հա հողատեսքերի ոռոգման նպատակով, Սևանա լճից նախատեսել լրացուցիչ 100մլն.մ3 ջրթողումներ, պահպանելով 03.05.2017թ. կայացած նիստին N2-փ/17 արձանագրության որոշման կետերի պահանջները:

Ելնելով Սևանա լճի էկոհամակարգի ոչ կայուն էկոլոգիական վիճակից անհրաժեշտ է ապահովել Սևանի մասին օրենքով սահմանված տարեկան ջրային դրական հաշվեկշիռը:

Միաժամանակ նշվում է, որ այս որոշումը ուժի մեջ է ընթացիկ տարվա համար:

**ՀՀԳԱԱ Սևանա լճի պահպանության**
**փորձագիտական հանձնաժողովի նախագահ** **Յու. Ջավադյան**